ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 4. Օրենքի խնդիրները

1. Օրենքի խնդիրներն են՝

~~2) ջրօգտագործման վճարի առավելագույն և նվազագույն չափերի, ներառյալ՝ ջրային ռեսուրսների արդյունահանման, վերադարձման և բնապահպանական վճարների դրույքաչափերի սահմանումը.~~

Հոդված 35. Տնտեսական մեխանիզմները

1. Կարճաժամկետ ժամանակահատվածում ջրային ոլորտի պետական լիազորված մարմիններն իրականացնում են ջրային ռեսուրսների կառավարման միջնաժամկետ և երկարաժամկետ ծախսերի և այդ ծախսերի ֆինանսավորման այլընտրանքային մեխանիզմների գնահատումը: Այդ այլընտրանքային մեխանիզմները պետք է պարունակեն առկա ~~ջրառի և աղտոտման համար վճարներիջրօգտագործման համար~~ բնօգտագործման վճարի և ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքերի համար բնապահպանական հարկի համակարգի բարելավման մանրամասն առաջարկությունները՝ կապված ջրային ռեսուրսների մոնիթորինգի, ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման և դրանց պայմաններին համապատասխանության ապահովման, ջրային պետական կադաստրի միջոցով տվյալների կառավարման համակարգերի ու ընթացակարգերի բարելավման ծախսերի փոխհատուցման հետ:

2. Ոլորտի զարգացման նպատակով բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների նպատակային օգտագործումը աստիճանաբար պետք է դառնա ոլորտի ֆինանսական ապահովման աղբյուրներից մեկը, որն իր արտացոլումը պետք է գտնի գործող, ինչպես նաև հետագայում ընդունվելիք իրավական ակտերում: